

ԲԱՐՈՅՑԱԿԱՆԵՔ

Ա Շ Խ Ա Բ Հ .

Արդեօք Բնէ է աշխարհս, նաեւ մյն մարդկանց համար՝ որ կոիրեն զինքը, եւ որ կարծես թէ աշխարհիս զուարձութիւններով զբն զմայլած՝ չեն կրնար առանց անոր ապրելու. . . .

Արդեօք Բնէ է աշխարհս.

— Յաւիտենական ծառայութիւն չարչարանց, յորում եւ ոչ մարդ մի կապրի ինքնիրեն համար, եւ որոյ մէջ բաղդաւոր ապրելու համար՝ պիտի համբուրեմք մեր կապանքները եւ սիրեմք այս գժնդակ ծառայութիւնը :

Դարձեալ, Բնէ բան է աշխարհս.

— Հանապազօրեայ փոփոխութիւն եղելութեանց, որ հետզհետէ կզարթնուն մարդկանց սրտերուն մէջ. Սոցա հազորդակից են՝ ամենէն բռնի եւ ամենէն տխուր չարչարանք, սաստիկ ատելութիւն, զզուելի չարութիւն, գառն երկիւղ, սրտաբեկ նախանձ եւ մահառիթ հիւանդութիւն :

Ի՞նչ բան է աշխարհս.

— Օտար երկիր մը, որոյ ամենագեղեցիկ փողոցներն անդամ փշով ու տատակով լըցուած են: — Մէկ տեղ միմոսական նորահնար խաղերը կձանձրացընեն զմարդ, միւս տեղ՝ մէկմէկու կարծեաց հակառակ զգացմունքները կվշտացնեն զնոսս: Այլ տեղ մի եւս՝ չարչարանքը յանցանաց, խայտառակութեան եւ կորստեան կփոխարկուի:

Վերջապէս Բնէ բան է այս աշխարհը.

— Այնպիսի տեղ մը՝ ուր նոյն ինքն յոյսը, որ մարդուս կեանքին մի միայն բարեհամբոյր բերկութիւնն է, գժբաղդութեան համբոյր կերկութիւնն է, գործադիր ապահովութիւնն է:

րուստ մարդիկը, որ ապրուստի կողմանէ ամենեւին պակասութիւն չունին, կամաւ աղքատ կցուցընեն իրենք զիրենք՝ որպէս զի այս եւ այն համարակաց բարւոյն զիրենք օգնութեան չկանչեն: Վերջապէս այնպիսի տեղ մը՝ ուր ամէն բանի կհաւանի մարդու միայն մէկ ակնթարթի մը համար, եւ ուր ձանձրութիւնն ու տաղտկութիւնը թեթեւ ու տանելի կհամարին, եւ որով իրենց սիրտըն ու հոգին կտանջեն: —

Այս, այսպէս է ձեր աշխարհը. չկարծէք որ ես այն աշխարհին համար կըսեմ՝ ուր չգիտեն ոչ չսովիէ գուրս զուարձութիւն, ոչ նիւթական փարթամութիւն եւ ոչ փափուկ առատութիւն: — Ոչ, ձեր այդ փայլուն աշխարհին վրայ է իմ խօսքս, հպարտ հարուստներ, ձեր աշխարհին վրայ կխօսիմ ես, եւ նորա գեռ չմտածուած պատկերը ձեր գիմացը կնկարագրեմ: Ես անթերի կերպով պատկերացնելով ձեր աշխարհը, ձեզմէ առի իմ աշխատութեանս նախագիծը. գուք զգացէք, գուք գիտցէք որ իմ ձեւակերպութիւնս ճշմարիտ է:

ՄԱՍԻՆԵՑՆ.

Դ Ա Գ Ա Գ Ո Ւ Թ.

Ի՞նչ է շողոքորթը.

— Նողոյորք կըսուի այն մարդն որ կակուղ ու դիւրաշարժ է, եւ ծառայաբար կըխոնարհի քու գիմացդ. քու ամէն խօսքիդ վրայ սուս զարմանք ցուցընելով՝ խելացիութեանդ վրայ կբացագանչէ, ամէն մէկ գործիդ վրայ՝ որքան եւ արհամարհելի լինի, ծափ կզարնէ կեղծաւորութեալը:

Շողոքորթ մարդը խորամանկ, աղուիսարոյ եւ մարդահաճոյ կլինի, հակամիտութեանդ վարժած՝ որ օգուտ քաղէ անկէց, կապակցութեանդ սովորած՝ որ յաջողութիւն գտնէ անով, եւ մինչեւ պակասութիւններդ անդամ առ երես՝ կատարելութեանց տեղ գնելով կդովէ, որ անով քու վրայ իշխէ:

Շողոքորթը՝ նենդաւոր ու խարդախ կլինի. մի եւ նոյն ժամանակ թէ կդովէ զքեզ եւ թէ կխաբէ. կքաջալերէ զքեզ ուրիշներուն դիմաց, բայց ի ծածուկ կդատապարտէ. Աչք կրիակէ քու ամէն թուլութեանցգ, որ անով աւելի ալ գրաւէ զքեզ, ու դուն ալ զիջանիս նորա ասածներուն:

Երբեմն շողոքորթը նախանձու ու ոխերիմ կլինի, եւ այնպէս կցուցընէ որ իբր թէ կուրախանայ քու մեծութեանդ վրայ, բայց իծածուկ ինքզինքը կպատուէ քու բարորութեանդ վրայ նախանձելով:

Դատ անդամ ալ շողոքորթը քու արժանաւորութեանդ վրայ վշտացած՝ զանգզան գովասանքներով կծածէլ իւր ատելութիւնը:

Շողոքորթը՝ ցած ու գարշելի մարդ միէ, որ իւր ամօթալի ցածութիւնը այլ եւ այլ կերպով ծածկելով, կաշխատի իւր նպատակն յառաջ տանելու:

Շողոքորթութիւնը աշխարհակարծան ախտերէն մէկն է. վասն զի նա ոչ թէ իւր որ եւ իցէ շահուն համար միայն կխաբէ իւր մեծն, այլ եւ մեծին հարկաւոր գործի մը մէջ սխալուած ժամանակը՝ հասարակաց գժբաղդութեանը պատճառ կլինի, երբ կըսկըսի գովել շողոքորթութեամբ նորա բռնած գործոյն վնասակար հետեւանքները:

ՀԱՅԻԹՈ.

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

1. Ընկերութեան խօսակցութիւնը պէտք է լինի էական բաներու վերայ, առանց գառն խօսքերու եւ խառնախօս շփոթութեան:

2. Խօսակցութեան ոճը պէտք է լինի ուսումնական՝ բայց առանց խմաստակութեան, զուարձալի՝ առանց աղմկի, քաղաքավարական՝ առանց գանդատի, թեթեւ՝ առանց փոփոխամտութեան, կատակող՝ առանց երկդիմի բառերու:

3. Ընկերութեան մէջ ամէն բանի վրայ կխօսուի, որպէս զի ամէն ընկեր կարողանայ իւր միտքը յայտնել:

4. Մը եւ իցէ առարկայի վրայ չափազանց խորերը չեն մաներ, որպէս զի ընկերութեան միւս անդամները չձանձրանան:

5. Ամէն բան պէտք է հարեւանցի կերպով առաջարկուի, եւ ամէն բանի վրայէն շուտով անցնուի:

6. Ամէն մարդ իւր կարծիքը կըսէ, բայց ոչ երբէք կանգէ եւ իւր ըսածին վրայ կըկենայ:

7. Մէկը միւսին չհակառակի կամակորութեամբ, այլ որքան կարելի է հանդարս ու խոչեմութեամբ տայ իւր պատասխանը:

8. Այսպիսի ընկերական խօսակցութեան մը մէջ մարդկանց մտքերը կլուսաւորուին՝ մի եւ նոյն նիւթի վրայ այլ եւ այլ խորհըրդածութիւններ ու կարծիքներ տեսնելով. հակառակութիւնը մէկդի կթողուի, որպէս զի ընկերութեան անդամներուն ունեցած փոքրիկ անձնասիրութիւնը անպատիւ չլինի: Խօսակցութենէն յետոյ ամէն մէկը քիչ մը ալ այս եւ այն նորանոր գրուածոց ընթերցանութեամբը կպարապի, եւ մէկմէկէ գոհ սրտով տուներնին կդառնան:

Ժ. Ժ. ԱՊԻՍՍՈ.

Եթէ դուն ընկեր կուզես ընտրել քեզ, թող ամուսինդ ընկեր լինի բոլոր կենացդ մէջ: Բայց եւ միտքդ պահէ հին առածը թէ « ընկերը մինչեւ հաւատալդ ». եւ մի անցնիք

երբէք նորա հետ աղէկ կերպով վարուելու սահմանէն որ սիրելի լինիս իրեն . ազա թէ ոչ՝ այն ոչ թէ ընկերութիւն, այլ ամօթոյ շաղկապ կլինի :

Հեռացիր ագահ մարդոյ ընկերութենէն. վասն զի ագահը բարկացող, հպարտ եւ մեծախօս կլինի : Այս յատկութիւններն ունեցող մարդիկը ցած եւ խաբերայ կլինին :

ՎԻԼԱՎԱՐ ՓԵՆ.

Ամէն նոր բան զարմանալի կերեւի այն մարդուն՝ որ կվախէ մտածելու :

Ոտքով ճանապարհ գնացած ժամանակիդ՝ ուրախ ընկերակիցդ փառաւոր կառք մի կարծէ :

Առաքինի եւ հեռատես ըսելու մարդիկը նոքա են որ ճանաչելով իւրեանց կարողութիւնը, չափաւորութեամբ եւ աչալը ծութեամբ կգործադրեն զայն : Սոքա միայն են որ պէտք եղածին չափ յառաջ կերթան աշխարհիս գործոցը մէջ :

ԱՅԹԵ.

Շատ միջոցներ կան հարստանալու, բայց անոնցմէ հաղիւ թէ քանի մի հատը պատուաւոր են : Զափաւորութիւնը ամենէն աղէկն է, բայց եւ այս կերպով ապրողներուն ալ կարելի չէ ասել որ պակասութիւն չունին : — Զափաւորութիւնը կհեռացնէ զմարդ քանի մի պարտականութիւններէ, որ կվերաբերին մարդկութեան եւ սիրոյ :

ՊԵՐԵԿԱՆ.

Ով որ ժամանակ կինտուէ, կկորսընցընէ իւր ժամանակը :

Երկու խօսք կայ ամենէն կարձ արտասանելու, այս եւ ոչ . բայց մէկու մը ըսելու ժամանակ՝ ամէն բառէն աւելի կտահանջուի սոցա վրայ մտածելը :

ՇԻԼԱԲԻ.

Առանց ներքին խղճմտանքի ոչ սրբութիւն կայ եւ ոչ հաւատ . եւ որ տեղ որ կպակասի ճշմարիտ հաւատքը, այն տեղէն կհեռանայ ամօթը, քաղաքական միութիւնը, եւ որ մեծն է՝ ճշմարտութիւնը :

ԿԻԿԵՐԱՆ.

Հին ատենի իմաստունները աշխարհքս ժատրոնի նմանցուցեր են . ամէն մարդ մի եւ նոյն ժամանակ թէ գերասան է եւ թէ այցելու : Դերասանները կաշխատին իւրեանց հնարքներովը փայլիլ, իոկ այցելուները «Զարմանալի խելք, հիմնալի ձիրք» կգոչեն անգագար : Բայց, թէ ինձ հարցընես, նոյն խոկ զարմանալի խելք ու հիմնալի ձիրք ու զագար : Բայց, թէ ինձ հարցընես, նոյն խոկ զարմանալի խելք ու հիմնալի ձիրք ու նեցող մարդիկներէն անդամ շատ քիչ կգտնուին այնպիսիներ, որ բարի անուն ժառանգեն, եւ այնպէս ապրին՝ որ բաղդաւոր կոչուին :

ՃՈԽՔՈՎԱՐԻ.